



**ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ**  
**Ա.Ս. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ԱՐԵՄՍՏԵԱՆ ԹԵՄԻ**  
**WESTERN PRELACY**  
**OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA**  
**H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE**  
Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745  
E-mail: [Prelacy@aol.com](mailto:Prelacy@aol.com) Website: [www.westernprelacy.org](http://www.westernprelacy.org)



**ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆԸ ՊԻՏԻ ՀԱՆԴԻՍԱԳԵՏԷ ՄՈՆԹԵՊԵԼԼՈՅԻ  
Ս. ԽԱԶ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ**

Կիրակի, 13 Դեկտեմբերին, Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան պիտի հանդիսապետե Մոնթեպելլոյի Ս. Խաչ Մայր Տաճարի Ս. Պատարագին եւ պիտի տայ օրուան յատուկ պատգամը:

Ս. Պատարագէն ետք, Առաջնորդ Սրբազանը պիտի նախագահէ Ս. Խաչ եկեղեցւոյ Կիրակնօրեայ վարժարանի ամանորի հանդեսին, որ տեղի պիտի ունենայ «Բաղրամեան» սրահին մէջ:

Կիրակնօրեայի աշակերտներու մասնակցութեամբ պիտի իրագործուի գեղարուեստական կոկիկ յայտագիր մը:

Յայտնենք, որ Դեկտեմբեր ամսուան ընթացքին, Թեմիս եկեղեցիներու Կիրակնօրեայ վարժարաններու Ամանորեան եւ Ս. Ծննդեան հանդեսները տեղի կ'ունենան եկեղեցիներու սրահներուն մէջ, հովանաւորութեամբ Առաջնորդ Սրբազան Զօր:

**PRELATE TO PRESIDE OVER DIVINE LITURGY AT  
HOLY CROSS CATHEDRAL**

On Sunday, December 13<sup>th</sup>, 2009, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, will preside over Divine Liturgy and deliver the sermon at Holy Cross Cathedral in Montebello.

Following Divine Liturgy, the Prelate will preside over the Sunday School New Yeas and Christmas program at "Bagramian" Hall.

\*\*\*

**ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆԸ ՊԻՏԻ ԿԱՏԱՐԷ Հ.Ս.Ը.Ս.-Ի  
ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ՆՈՐԱԿԱՌՈՅՑ ԿԵԴՐՈՆԻ ԲԱՅՈՒՄԸ**

Հ.Ս.Ը.Ս.-ի Շրջանային Վարչութեան նորակառոյց կեդրոնի բացման հանդիսութիւնը տեղի պիտի ունենայ Կիրակի, 13 Դեկտեմբերին, կեսօրե ետք ժամը 3-ին: Առաջնորդ Սրբազանը ներկայ պիտի ըլլայ հանդիսութեան

Եւ պիտի կատարէ նորակառոյց կեդրոնի բացման արարողութիւնը: Առաջնորդ Սրբազանին պիտի ընկերանայ Կլենտէյլի Ս. Աստուածածին եկեղեցւոյ հոգեւոր հովիւներէն Արժ. Տ. Վազգէն Քիւյ. Աթմաճեան: Իբրեւ Հանդիսութեան Ազգային Վարչութեան ներկայացուցիչ, ներկայ պիտի ըլլայ Տիար Ներսէս Մելքոնեան:

## **PRELATE TO PRESIDE OVER GRAND OPENING CEREMONY OF HOMENETMEN WR NEW HEADQUARTERS**

The grand opening ceremony of the newly constructed Homenetmen Western U.S. Regional Office headquarters will take place on the afternoon of Sunday, December 13<sup>th</sup>, 2009.

The Prelate will preside over the ceremony. He will be accompanied by Rev. Fr. Vazken Atmajian. Executive Council member Mr. Nerses Melkonian will also attend.

\*\*\*

## **ՏՕՆԱԿԱՆ ՕՐԵՐՈՒ ՆԱԽՕՐԵԱԿԻՆ ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆԸ ԱՅՅԵԼԵՑ ՖՐԵԶՆՈՅԻ Ս. ԵՐՐՈՐԴՈՒԹԻՒՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑՈՅ ԾՈՒՆԻՆ**

8-10 Դեկտեմբերին, Առաջնորդ Սրբազան Հայրը եղաւ Ֆրեզնոյի Ս. Երրորդութիւն Մայր եկեղեցւոյ մեծ ընտանիքին հետ:



Առաջնորդ Սրբազանը հանդիպումներ ունեցաւ եկեղեցւոյ հոգեւոր հովիւին՝ Արժ. Տ. Վահան Քիւյ. Կոստանեանի, հոգաբարձութեան, երեսփոխաններուն, Տիկնանց Միութեան, գաղութի նուիրեալներուն ու բարերարներու եւ այլ ծառայողներու հետ:

Զորեքշաբթի, 9 Դեկտեմբերի երեկոյեան, եկեղեցւոյ կից սրահին մէջ տեղի ունեցաւ հանդիպում հաւաք մը, որուն մասնակից եղան եկեղեցւոյ մեծ ընտանիքին ներկայացուցիչները՝ եկեղեցւոյ հոգեւոր հովիւը, հոգաբարձութիւնը, երեսփոխանները, տիկնանց միութեան, կիրակնօրեայի, եւ այլ միաւորներու անդամներ ու եկեղեցւոյ գրասենեակին պաշտօնէութիւնը:

Առաջնորդ Սրբազանը գնահատանքի խօսք արտասանեց, վեր առնելով եկեղեցւոյ ու ծխական համայնքին ծառայողներուն երախտիքը:

Իսկ Հինգշաբթի, 10 Դեկտեմբերի կէսօրին, եկեղեցւոյ Տիկնանց Միութիւնը կազմակերպած էր ամանորի եւ Ս. Ծննդեան ճաշկերոյթը, որուն

ներկայ եղաւ Առաջնորդ Սրբազանը եւ գնահատանքի խօսք ուղղեց անդամներուն ու ծառայողներուն, միաժամանակ շնորհաւորանք ուղղելով ամանորի ու Ս. Ծննդեան տօնին առիթով:

## **PRELATE MEETS WITH HOLY TRINITY CHURCH REPRESENTATIVES AND FRESNO COMMUNITY MEMBERS**



On Tuesday, December 8<sup>th</sup>, 2009, the Prelate departed for Fresno to meet with the Pastor Rev. Fr. Vahan Gosdanian, Board, Delegates, and Ladies Auxiliary of Holy Trinity Church, as well as representatives of community organizations.

On the evening of Wednesday, December 9<sup>th</sup>, the Prelate attended a dinner reception at the church hall, during which he conveyed his commendations to the parish volunteers for their devoted

service.

On Thursday afternoon, the Prelate attended the New Year and Christmas luncheon organized by the Ladies Auxiliary where he conveyed his well wishes and blessings.

\*\*\*

## **ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆԸ ՇՆՈՐՀԱՒՈՐԵՑ ՓՕԼ ԳՐԻԳՈՐԵԱՆԸ՝ ԸՆՏՐՈՒԹԵԱՆ ԱՌԻԹՈՎ**

Լոս Անճելըսի քաղաքապետական խորհուրդի մասնակի ընտրութիւն մը տեղի ունեցաւ Երեքշաբթի, 8 Դեկտեմբերին, լրացնելու համար Ուէնտի Կրիլ թափուր մնացած աթոռը, 2-րդ ընտրաշրջանին մէջ:

Խորհրդարանի անդամ Փոլ Գրիգորեան երկու թեկնածուներէն մէկն էր: Ինչպէս ծանօթ է, ան շահեցաւ ընտրութիւնները, մրցակիցին վրայ 13 առ հարիւրի առաւելութիւն մը ձեռք բերելով:

Այս առիթով, Առաջնորդ Սրբազան Զայրը կապի մէջ մտաւ ընտրեալ թեկնածուին հետ, շնորհաւորեց զայն եւ յաջողութեան մաղթանքներն ու իր օրհնութիւնները փոխանցեց անոր:

## **PRELATE CONGRATULATES COUNCILMAN-ELECT PAUL KREKORIAN**

On Tuesday, December 8<sup>th</sup>, 2009, elections for the Los Angeles City Council 2<sup>nd</sup> District took place, for which Assemblyman Paul Krekorian was a candidate. The seat was left vacant by former Council member Wendy Greuel after she assumed the office of City Controller earlier this year.

Paul Krekorian won the election by a margin of 13 points over his opponent. The Prelate congratulated Councilman-elect Paul Krekorian on his victory and wished him success in his new position.

\*\*\*

## **ԵՐԻՏԱՍԱՐԴԱՅ ՏԱՐՈՒԱՆ ԶԵՌՆԱՐԿ՝ Ս. ԲԱՌԱՍՆԻՑ ՄԱՆԿԱՆՑ ԵԿԵՂԵՑՈՅ ՄԷՋ**

Կիրակի, 6 Դեկտեմբերի յետմիջօրեին, Օրենճ Բաունթիի Սրբոց Բառասնից Մանկանց եկեղեցւոյ մէջ, Երիտասարդութեան Տարուան նուիրուած հանդիսաւոր տօնակատարութիւն մը տեղի ունեցաւ:

Առաջնորդ Սրբազան Զօր հովանաւորութիւնը վայելող ձեռնարկը կազմակերպուած էր եկեղեցւոյ հոգեւոր հովիւին, հոգաբարձութեան եւ Տիկնանց Միութեան կողմէ:

Տ. Մեսրոպ Ա. Զինյ. Թաշճեան ներկայացուց «Զայ Երիտասարդին Դերը Ազգային, Կրօնական եւ Մշակութային Պրիսմակներէն Դիտուած» նիւթը:

Գեղարուեստական յայտագիրին մասնակցութիւն բերին Ազգային Առաջնորդարանի «Լուսաւորիչ» երիտասարդական երգչախումբը, ղեկավարութեամբ՝ Զոգեշ. Տ. Պարթեւ Վրդ. Կիլիւմեանի:

Յայտագրի աւարտին, հոգաբարձութիւնը ներկաները հրաւիրեց սիրոյ սեղանի մը շուրջ: Խօսք առին Ազգ. Վարչութեան ատենապետ Դոկտ. Կարօ Յակոբեան, եկեղեցւոյ հոգաբարձութեան ատենապետ Պրն. Գեորգ Տէր Ալեքսանեան, Տիկնանց Միութեան ատենապետուհի Տիկ. Մարի Եաղմուրեան, իսկ երգչախումբին կողմէ խօսք առին կարգ մը երգիչ ու երգչուհիներ, խոստանալով ամէն ջանք ի գործ դնել իրենց խումբին միացնելու հայ երիտասարդ-երիտասարդուհիներ, որպէսզի անոնք հեռու մնան անշահաբեր մթնոլորտէ եւ օգտուին մեր մշակոյթի ակունքներէն:

## **“YEAR OF THE YOUTH” COMMEMORATED AT FORTY MARTYRS CHURCH**

On the afternoon of Sunday, December 6<sup>th</sup>, 2009, an event dedicated to the “Year of the Youth” proclaimed by H.H. Catholicos Aram I took place at Forty Martyrs Church in Orange County. The event took place under the

auspices of the Prelate and was organized by the parish Pastor, Board of Trustees, and Ladies Auxiliary.

Archpriest Fr. Dr. Mesrob Tashjian lectured on the topic "The Role of the Armenian Youth in our National, Religious, and Cultural Life". The Prelacy "Lousavorich" Youth Choir led by Very Rev. Fr. Barthev Gulumian participated in the artistic program.

A reception followed the lecture, during which remarks were delivered by Executive Council Chairman Dr. Garo Agopian, parish Board of Trustees Chairman Mr. Kevork Der Alexanian, Ladies Auxiliary Chair Mrs. Marie Yaghmourian, and members of the youth choir.

\*\*\*